



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. ապրիլին /վերլուծություն/

2007թ. ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 11644 գործարքներ, որոնց քանակը 2006թ. ապրիլի համեմատ աճել է 21.3%-ով, իսկ 2007թ. մարտի համեմատ նվազել՝ 7.3%-ով:

2007թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4482 օտարման գործարքների 85.8% կազմել են առուվաճառքները, 13.5%՝ նվիրատվությունները և 0.8%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 32.7%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.1% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. ապրիլին, 2007թ. մարտի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 9.1%-ով, իսկ 2006թ. ապրիլի համեմատ աճել՝ 11.5%-ով:

2007թ. ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.4% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. մարտի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.7%-ով, իսկ 2006թ. ապրիլի համեմատ աճել՝ 1.9%-ով:

2007թ. ապրիլին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	ապրիլ 2006թ.	ապրիլ 2007թ.	մարտ 2007թ.
Կենտրոն	366100	439700	422800
Արաբկիր	289800	346800	330600
Քանաքեռ-Զեյթուն	175100	250800	239300
Նոր-Նորք	164000	219000	215800
Ավան	146000	201700	199400
Էրեբունի	144100	212600	208300
Շենգավիթ	173400	227700	222800
Դավթաշեն	179800	233400	228500
Աջափնյակ	164100	221500	214200
Մալաթիա-Սեբաստիա	161400	207000	199100
Նուբարաշեն	103700	120000	118800
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>188900</b>	<b>243700</b>	<b>236300</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. ապրիլին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. մարտի համեմատ աճել են 3.1%:

2007թ. ապրիլին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 526 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. մարտի համեմատ նվազել է 6.9%-ով, իսկ 2006թ. ապրիլի համեմատ աճել՝ 27.4%-ով:

2007թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2006թ.	ապրիլ 2007թ.	մարտ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	59900	97600	93000
	Ապարան	25100	28500	28500
	Թալին	23200	35000	33700

Արարատ	Արտաշատ	44400	77800	74700
	Մասիս	54000	84900	82600
	Վեդի	37500	57000	55100
	Արարատ	39300	54600	54600
Արմավիր	Վաղարշապատ	78700	119800	114600
	Արմավիր	50200	83700	82700
	Մեծամոր	33700	54500	53100
Գեղարքունիք	Սևան	33200	56000	54500
	Գավառ	24900	33600	33100
	Մարտունի	38400	48900	47200
	Վարդենիս	19800	26200	25500
	Ճամբարակ	13500	14200	14200
Լոռի	Վանաձոր	47400	67000	65300
	Ստեփանավան	24200	32300	32300
	Մայիսակ	32800	43900	42300
	Ալավերդի	20400	24200	23700
	Տաշիր	19800	23400	22900
	Թումանյան	5200	5400	5400
	Շամլուղ	2700	3000	3000
	Ախթալա	10300	11600	11600
Կոտայք	Աբովյան	88900	134400	132000
	Նոր Հաճն	60400	93800	92000
	Բյուրեղավան	42100	67500	64500
	Եղվարդ	55300	83100	80000
	Հրազդան	34500	47700	45700
	Ծաղկաձոր	70500	87000	84500
	Չարենցավան	38400	56640	54000
Շիրակ	Գյումրի	47300	64400	61800
	Արթիկ	30300	41500	41500
	Մարալիկ	21600	24100	24100
Սյունիք	Գորիս	50500	67500	64800
	Կապան	38600	60900	58500
	Սիսիան	31600	50600	50600
	Մեղրի	25300	35600	35600
	Ագարակ	19000	23300	23300
	Քաջարան	22600	31000	29700
	Դաստակերտ	6300	6800	6800
Վայոց Ձոր	Վայք	32900	55400	54000
	Եղեգնաձոր	51400	67100	63900
	Ջերմուկ	58600	102800	98100
Տավուշ	Դիլիջան	39900	61000	61000
	Իջևան	48300	82300	79100
	Բերդ	29000	33000	33000
	Նոյեմբերյան	15500	27800	26900
	Այրում	18000	18000	18000

2007թ. ապրիլին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. մարտի համեմատ աճել են 2.8%:

2007թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 526 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 108, մյուս մարզերում միասին վերցրած՝ 418: 2007թ. մարտի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 10.4%-ով, ընդ որում Երևանում՝ 11.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 10.1%-ով: 2006թ. ապրիլի

համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 27.4%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 10.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 42.7%-ով:

2007թ. ապրիլին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	ապրիլ 2006թ.	ապրիլ 2007թ.	մարտ 2007թ.
Կենտրոն	382500	444700	432200
Արաբկիր	296800	351400	341200
Քանաքեռ-Զեյթուն	178700	254400	244500
Նորք-Մարաշ	186500	222600	219100
Ավան	149200	206500	203300
Էրեբունի	146800	220000	217000
Շենգավիթ	177100	231700	225800
Դավթաշեն	182500	241500	239200
Աջափնյակ	166900	226300	217800
Մալաթիա-Սեբաստիա	164300	210500	202700
Նուբարաշեն	106100	123100	121500
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>194300</b>	<b>248400</b>	<b>242200</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. ապրիլին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. մարտի համեմատ աճել են 2.6 % :

2007թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2006թ.	ապրիլ 2007թ.	մարտ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	63800	100900	97900
	Ապարան	26100	33000	32000
	Թալին	24600	37900	36700
Արարատ	Արտաշատ	45600	80300	77300
	Մասիս	55200	88700	86400
	Վեդի	38700	59900	58100
	Արարատ	40300	58600	57300
Արմավիր	Վաղարշապատ	80000	121900	117500
	Արմավիր	51300	88000	85400
Գեղարքունիք	Սևան	38000	59500	57300
	Գավառ	26200	37100	35800
	Մարտունի	39400	51800	50400

	Վարդենիս	21400	29500	29000
	Ճամբարակ	14900	17100	16700
Լոռի	Վանաձոր	49100	71900	69300
	Ստեփանավան	26700	37300	36300
	Սպիտակ	34100	48200	46800
	Ալավերդի	21700	27900	26900
	Տաշիր	21300	26600	25700
	Թումանյան	6800	7800	7500
	Շամլուղ	4300	5000	5000
	Ախթալա	11900	13700	13400
Կոտայք	Աբովյան	90300	139800	136700
	Նոր Հաճն	61300	101000	96200
	Բյուրեղավան	43300	70400	67600
	Եղվարդ	56400	87000	85700
	Հրազդան	35900	51300	49300
	Ծաղկաձոր	71700	109000	100200
	Չարենցավան	39400	58900	57100
Շիրակ	Գյումրի	48900	67800	65500
	Արթիկ	31400	44800	44200
	Մարալիկ	23400	27100	26900
Սյունիք	Գորիս	51500	70100	67600
	Կապան	39600	64100	62100
	Սիսիան	32900	54500	53400
	Մեղրի	27000	39300	38600
	Ագարակ	21000	26600	26100
	Դաստակերտ	8600	9600	9400
Վայոց Ձոր	Վայք	34000	58500	58000
	Եղեգնաձոր	52400	69600	67800
	Ջերմուկ	35400	48300	46200
Տավուշ	Դիլիջան	40900	65200	63900
	Իջևան	49500	84900	82400
	Բերդ	30600	35900	35700
	Նոյեմբերյան	16800	30100	29000
	Այրում	19200	19200	19200

2007թ. ապրիլին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. մարտի համեմետ աճել են 3.1%:

Ընդհանուր առմամբ, 2007թ. ապրիլին հանրապետությունում օտարվել են 1754 միավոր /1391.02 հա/ հողեր, որից Երևանում` 135 միավոր /12.64 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 83 միավոր /92.34 հա/ հողեր, որից Երևանում` 36 միավոր /2.11 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 775 միավոր /1292.88 հա/, որից Երևանում` 3 միավոր /0.68 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 567 միավոր /52.66 հա/, որից Երևանում` 83 միավոր /7.52 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 390 միավոր /35.92 հա/, որից Երևանում` 45 միավոր /4.18 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 18 միավոր /7.76 հա/, որից Երևանում` 4 միավոր, /0.27 հա/,

- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 4 միավոր /1.80 հա/,

2007թ. ապրիլին հանրապետությունում օտարված հողերից 1624 միավորի /1344.56 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 120 միավոր /11.14 հա/, նվիրատվության գործարքներ՝ 112 միավորի /42.01 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /1.37 հա/ և փոխանակության գործարքներ՝ 18 միավորի /4.46 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.14 հա/:

Հանրապետությունում 2007թ. ապրիլին, 2006թ. ապրիլի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 22.4%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 18.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 31.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 61.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 802.30 հա, որից 795.83 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 40.5% կամ 658 գործարքներ /659.22 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 47 գործարքներ /5.13 հա/, իսկ 59.1% կամ 960 միավորը /684.55 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 27 միավոր /23.12 հա/:

2007թ. հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 6 գործարք /0.79 հա/:

Ստորև ներկայացվում է 2007թ. ապրիլին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և կառուցապատման իրավունքի վաճառքը:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	4	0.27	13	2.84	30	2.02	2	0.25	0	0.00	57	3.63	11	1.38
Արագածոտն	44	47.26	0	0.00	0	0.00	6	0.24	56	33.72	0	0.00	39	3.27	7	0.38
Արարատ	53	61.02	4	3.91	23	2.09	18	0.42	79	31.73	0	0.00	88	7.63	1	0.01
Արմավիր	44	346.71	0	0.00	5	0.46	16	0.38	123	449.12	0	0.00	56	5.55	7	0.08
Գեղարքունիք	2	3.30	0	0.00	1	0.12	23	2.63	5	7.14	0	0.00	10	1.72	5	1.19
Լոռի	4	6.28	1	0.02	4	0.75	62	6.29	30	11.58	0	0.00	6	1.11	8	0.13
Կոտայք	80	119.52	1	0.20	9	0.49	67	5.10	125	67.65	0	0.00	140	13.22	20	0.74
Շիրակ	3	3.24	0	0.00	21	0.70	22	0.39	18	22.20	0	0.00	8	0.91	1	0.01
Սյունիք	1	0.10	0	0.00	2	0.13	10	0.36	7	6.39	0	0.00	5	0.38	1	0.002
Վայոց Ձոր	5	23.20	0	0.00	6	0.58	41	0.94	6	2.70	0	0.00	5	0.58	2	0.02
Տավուշ	1	0.13	6	3.18	2	0.09	20	12.08	22	9.59	2	0.18	5	0.33	3	0.03
Ընդամենը	237	610.76	16	7.58	86	8.25	315	30.85	473	642.07	2	0.18	419	38.33	65	3.97

Ստորև ներկայացվում է 2007թ. ապրիլին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների,

բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	29	2.24	4	0.27	5	0.38	20	1.59	18	2.89	0	0.00	0	0.00	8	2.46	10	0.43
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	50	47.50	44	47.26	0	0.00	0	0.00	6	0.24
Արարատ	6	0.37	1	0.28	2	0.07	3	0.02	92	67.07	53	61.02	3	3.63	21	2.02	15	0.40
Արմավիր	6	0.28	0	0.00	2	0.21	4	0.07	52	337.58	37	337.02	0	0.00	3	0.25	12	0.31
Գեղարքունիք	5	1.14	0	0.00	0	0.00	5	1.14	21	4.90	2	3.30	0	0.00	1	0.12	18	1.48
Լոռի	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	70	13.33	4	6.28	1	0.02	4	0.75	61	6.28
Կոտայք	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	155	125.29	80	119.52	1	0.20	9	0.49	65	5.08
Շիրակ	4	0.08	0	0.00	0	0.00	4	0.08	42	4.24	3	3.24	0	0.00	21	0.70	18	0.30
Սյունիք	3	0.05	0	0.00	1	0.03	2	0.02	10	0.54	1	0.10	0	0.00	1	0.10	8	0.34
Վայոց Ձոր	4	0.06	0	0.00	0	0.00	4	0.06	48	24.67	5	23.20	0	0.00	6	0.58	37	0.89
Տավուշ	7	0.64	2	0.62	0	0.00	5	0.02	22	14.84	1	0.13	4	2.56	2	0.09	15	12.06
Ընդամենը	67	4.88	7	1.17	10	0.69	50	3.02	580	642.85	230	601.07	9	6.41	76	7.56	265	27.86

Հանրապետությունում 2007թ. ապրիլին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 7 գործարքներ /9.69 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. ապրիլին 2006թ. ապրիլի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 2.6 անգամ: Ընդ որում Երևանում աճել է 18 գործարքով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 2.5 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 2.6 անգամ, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 20.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 3.8 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 12.5%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. ապրիլին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

արածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	42	445.57	35.6	12381.8	1134.0	42	14.35	362.2	6772.5	2545.1
Ապարան						2	5.32	90.6	767.6	358.2
Թալին	2	2.70	35.4	35.4	35.4	6	6.06	90.6	758.5	372.4
Ծաղկահովիտ						5	4.14	77.0	948.2	168.2
Արարատի մարզ										

Արտաշատ	8	4.19	68.0	2273.4	1446.5	30	8.88	335.1	5418.0	1375.8
Մասիս	3	2.27	77.9	433.8	241.0	21	5.70	181.1	6772.5	1756.6
Վեդի	42	54.51	40.0	2296.8	214.7	27	16.50	203.8	4515.0	1178.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	8	92.55	21.0	214.1	52.6	23	13.29	294.3	4063.5	871.7
Բաղրամյան	15	270.49	22.6	597.5	141.5	46	415.27	90.6	677.3	547.7
Վաղարշապատ	14	36.98	33.8	2464.0	347.2	52	18.72	443.7	9030.0	1475.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								190.2	496.7	356.8
Ճամբարակ	2	3.30	147.7	153.0	150.3			45.3	541.8	143.2
Մարտունի						2	0.31	45.3	1806.0	470.2
Սևան								45.3	451.5	192.1
Վարդենիս						3	6.83	27.2	532.8	238.4
Լոռու մարզ										
Ալավերդի						20	7.26	163.0	2483.3	1035.8
Գուգարք								226.4	2709.0	921.0
Սպիտակ	1	0.60	1140.0	1140.0	1140.0	1	0.12	226.4	1490.0	510.2
Ստեփանավան	3	5.68	450.0	500.0	483.3	1	0.24	90.6	2257.5	355.1
Տաշիր						8	3.95	45.3	451.5	198.7
Կոտայքի մարզ										
Աբովյան	45	68.57	38.5	864.2	344.9	32	18.03	271.7	11287.5	3182.4
Եղվարդ	26	45.02	42.5	599.3	181.0	79	41.38	172.1	11287.5	2274.5
Հրազդան	9	5.93	96.8	366.3	243.2	14	8.25	113.2	2709.0	882.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.64	140.5	140.5	140.5	9	7.54	249.0	1693.1	440.0
Ամասիա						1	2.01	36.2	237.0	110.2
Անի						2	2.80	108.7	361.2	232.3
Աշոցք						5	6.86	45.3	112.9	116.8
Արթիկ	2	1.60	188.6	188.6	188.6	1	2.99	63.4	1083.6	167.9
Սյունիքի մարզ										
Գորիս								90.6	673.3	335.2
Կապան	1	0.10	306.0	306.0	306.0	1	0.60	54.3	841.6	221.6
Սեղրի						4	0.89	181.1	1784.2	455.4
Միսիան						2	4.91	45.3	631.2	221.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	23.20	39.0	630.0	403.0	5	2.59	117.7	2524.8	1269.6
Վայք						1	0.11	54.3	1430.7	503.8
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	841.6	349.4
Իջևան	1	0.13	790.9	790.9	790.9	4	1.62	240.0	1683.2	793.2
Նոյեմբերյան						18	7.98	45.3	3509.5	506.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. ապրիլին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների		
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/



			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						37	31473.0	113.2	3612.0	2268.4
Ապարան								113.2	632.1	187.3
Թալին						1	421.0	45.3	361.2	92.3
Ծաղկահովիտ						1	780.0	45.3	361.2	68.4
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	10	10000.0	145.0	420.0	362.0	21	22418.0	135.8	2709.0	882.2
Մասիս	9	10112.0	57.2	994.2	659.6	46	31256.0	135.8	9030.0	1115.4
Վեդի	2	120.4	1171.3	1171.3	1171.3	21	22597.0	113.2	993.3	640.2
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	1250.0	277.2	277.2	277.2	10	17964.0	135.8	2257.5	1052.2
Բաղրամյան								81.5	270.9	124.3
Վաղարշապատ	2	1200.0	3828.0	3828.0	3828.0	40	37516.0	135.8	4515.0	1410.5
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						1	540.0	135.8	903.0	345.9
Ճամբարակ								45.3	135.5	94.8
Մարտունի	1	1200.0	58.3	58.3	58.3	7	14300.0	90.6	451.5	225.4
Սևան								90.6	903.0	138.2
Վարդենիս						2	2386.0	45.3	225.8	102.4
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի								67.9	270.9	120.2
Գուգարք	3	7080.0	67.0	2105.4	957.5	5	10217.0	67.9	2347.8	530.2
Սպիտակ	1	400.0	55.2	55.2	55.2	1	890.0	63.4	451.5	120.1
Ստեփանավան								45.3	270.9	95.1
Տաշիր								45.3	135.5	68.1
<b>Կոտայքի մարզ</b>										
Արբիլյան	1	500.0	430.0	430.0	430.0	76	78543.6	135.8	6772.5	1705.3
Եղվարդ	1	1150.0	1690.5	1690.5	1690.5	52	46417.0	135.8	6772.5	1838.1
Հրազդան	7	3290.0	294.8	636.0	587.3	8	6260.0	135.8	9030.0	1201.5
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	16	3576.5	277.3	3827.8	1785.0	4	4880.0	113.2	1535.1	320.4
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի								67.9	180.6	94.2
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	5	3400.0	68.8	515.7	250.5	4	4190.0	67.9	925.6	155.3
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						1	1331.0	67.9	541.8	228.1
Կապան	1	1019.0	475.0	475.0	475.0	2	1085.0	67.9	632.1	197.3
Մեղրի						2	1380.0	67.9	406.4	112.2
Սիսիան								67.9	406.4	132.3
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	6	5800.0	75.6	686.3	278.9	3	3200.0	67.9	1128.8	272.3
Վայք						2	2620.0	77.0	632.1	114.7
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ								45.3	632.1	82.5
Իջևան	2	900.0	222.0	525.0	373.5	5	3341.0	67.9	1354.5	382.5
Նոյեմբերյան								45.3	632.1	122.8

2007թ. ապրիլին հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարք /0.08 հա մակերեսով/ Լոռու մարզում:

2007թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 851 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների

պետական գրանցումների քանակի 7.3%: Ընդ որում, վարձակալության գործարքների 43.0% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. ապրիլին 2007թ. մարտի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 3.3%-ով, իսկ 2006թ. ապրիլի համեմատ՝ 11.4%-ով:

2007թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 55 բնակարանների, 33 անհատական բնակելի տների, 302 հասարակական, 41 արտադրական նշանակության օբյեկտների, 417 միավոր /1315.61 հա/ հողերի և 3 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. ապրիլին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 28 վարձակալության գործարքների, այդ թվում 22 միավոր /0.10 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2007թ. մարտի համեմատ նվազել է 12.5%-ով, իսկ 2006թ. ապրիլի համեմատ աճել՝ 40.0%-ով:

2007թ. ապրիլին հանրապետությունում վարձակալված 1315.61 հա հողերից 0.85 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1314.76 հա հողերի 25.04 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.80 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 401.44 հա, որից 401.40 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 40.00 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. ապրիլին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	25	57.94
Արարատ	0	0.00	17	52.49
Արմավիր	0	0.00	13	36.14
Գեղարքունիք	2	40.00	53	174.76
Լոռի	0	0.00	25	184.93
Կոտայք	0	0.00	9	5.20
Շիրակ	0	0.00	41	401.40
Սյունիք	0	0.00	18	54.36
Վայոց Ձոր	0	0.00	5	219.74
Տավուշ	0	0.00	6	35.21
<b>Ընդամենը</b>	<b>2</b>	<b>40.00</b>	<b>212</b>	<b>1222.17</b>

2007թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1987 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 17.1%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. մարտի համեմատ նվազել է 3.0%-ով, իսկ 2006թ. ապրիլի համեմատ աճել՝ 97.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.3%/, առանձնատների /26.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.9%/ և հողերի /12.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 804 գրավադրման գործարքներից ծագող

իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. մարտի համեմատ աճել է 6.5%-ով, իսկ 2006թ. ապրիլի համեմատ՝ 46.4%-ով:

2007թ. ապրիլին հանրապետությունում գրավադրվել են 298.54 հա հողեր, որից 6.40 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 95.6% կամ 285.27 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 86.94 հա, որից 86.85 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 4 և 3 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. մարտի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 22.2%-ով, իսկ 2006թ. ապրիլի համեմատ՝ 91.4%-ով: 2007թ. ապրիլին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 28.6-ական%՝ Կոտայքի և Շիրակի, 14.3-ական %՝ Երևանի, Գեղարքունիքի, և Վայոց Ձորի մարզերում:

2007թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1916 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. մարտի համեմատ նվազել է 4.8%-ով, իսկ 2006թ. ապրիլի համեմատ աճել՝ 14.6%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.5%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /40.7%/:

#### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***